

# Բարի Լուր

Հովսեփ Հովսեփյան

Ընթերցանություն. Գործք. 14.8-20

Շատ մարդիկ գործածում են <<Ավետարան>> բառը՝ առանց նույնիսկ ճշմարտապես հասկանալու դրա իրական նշանակությունը: Հունարենում <<Ավետարան>> բառի համարժեքը <<evangelion>> բառն է, որը պարզապես նշանակում է բարի լուր կամ բարի պատգամ: Բարի լուրը մի պատգամ է, որն առաջին անգամ լսելուց հետո ոգևորվում ես և ուզում ես այն փոխանցել մեկ ուրիշի:

Պողոս առաքյալը Գործք Աստաքելոցում բազմիցս նկարագրել է այս պատգամը, այս Բարի Լուրը: Օրինակ՝ մինչ Պողոսն ու Բառնաբասը Լյուստրայում էին (քաղաք ներկայիս Թուրքիայում), նրանք Ավետարանը այս կերպ մեկնաբանեցին:  
<<Որ անցած դարերում թույլ սովեց բոլոր հեթանոսներին, որ իրենց ճանապարհով գնան...>> (Գործք. 14.15):

Պողոսի լավ լուրը հետևյալն էր. նրանք չպետք է վստահեին անարժեք կուռքերին և այլ բաներին, որոնց ծառայում էին: Նրանք կարող էին իրենց կյանքը նվիրաբերել կենդանի Աստծուն՝ Նրան, ով բավականաչափ գորեղ էր աշխարհն արարելու և բավականաչափ սիրառատ՝ նրանց մասին հոգ տանելու համար: Եվ գիտե՞ս ինչ. շատերը հավատացին այս Բարի Լուրին և փոխեցին իրենց կենսակերպը:

Ես հավատում եմ, որ աշխարհը շատ չի փոխվել: Մարդիկ տակավին ծառայում են անարժեք բաներին: Բայց դրանց կուռք անվանելու փոխարեն, անվանում ենք աշխատանք, փող, զվարճալիքներ, կրոն և այլն: Մարդիկ ապրում են միայնակ ու աննպատակ: Նրանք հաճախ ընտրում են անարժեք բաներ, որովհետև չգիտեն, թե ուրիշ ինչը կարող է օգնել իրենց: Եվ մինչ մարդիկ փնտրում են, որ գտնեն կյանքի նպատակը կամ որևէ ավետիս, կրոնավորները զբաղված են իրենց իսկ գործերով և ունեն իրենց օրակարգերը: Թվում է, թե հավատացյալները և եկեղեցիները իրականում չգիտեն կամ պարզապես մոռացել են, թե ինչի մասին է Հիսուս Քրիստոսի Ավետարանը: Մենք պետք է վերադառնանք Աստվածաշնչին և զգուշորեն լսենք Հիսուս Քրիստոսի Խոսքը, ում անունը որ կրում ենք: Ապա մեկ ուրիշ՝ ավելի լավ ու ավելի խիստ հայացք գցենք մեր ապրած <<քրիստոնեությանը>>, քանի դեռ չափազանց ուշ չէ:

Արդյո՞ք ես ու դու փորձառում ենք Բարի Լուրը:

Արդյո՞ք իրականում Բարի Լուրը հայտնում ենք մեր ընկերներին՝ նրանց դեպի Հիսուս ուղղորդելու նպատակով:

Նրանց հետ խոսու՞մ ես Աստծո և քո կյանքում Աստծո կատարած գործերի մասին:

Եթե դու Բարի Լուրը՝ Հիսուսի Խոսքը, հաղորդես բոլոր նրանց, ում հանդիպում ես ամեն օր, մարդիկ կարձագանքեն այնպես, ինչպես արձագանքեցին տարիներ առաջ:

Հիշեցում. Աստված փրկել է քեզ և իմաստավորել է քո կյանքը: Այժմ գնա՛ և այս Բարի Լուրը հայտնի՛ր ուրիշներին: